# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

**ք. Երևան** **22 նոյեմբերի 2016թ.**
**ժամը՝ 14:00**

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան**
**Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Կյուրեղյան, Պ. Ֆրենգյան, Վ. Համբարյան, Ա. Մարկոսյան**
**Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան**

**Օրակարգ**
**հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

1. **Տեղեկություն «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1» ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին.**

«Հայատոմ» ՓԲԸ-ի կողմից փաստաթղթային եղանակով կազմակերպված **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1»** ծածկագրով մրցույթի հայտերը բացվել են հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրը՝ **2016 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 14:00-ին,** ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները.**

«Հայատոմ» ՓԲԸ-ի կողմից փաստաթղթային եղանակով կազմակերպված **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1»** ծածկագրով «Օդորակիչներ, էլեկտրատեխնիկա և կենցաղային սարքավորումներ»-ի գնման ընթացակարգին, որոնք խմբավորված են 6 չափաբաժիններում, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցների անվանումները | Հասցե, հեռ. |
|---|---|---|
| 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | Ք. Երևան, Սարկավագի 72/2, բն. 18 հեռ. 055019060 |
| 2 | «Վեգա Ուորլդ» ՍՊԸ | Ք. Երևան, Թումանյան 4/1, հեռ. 523720 |
| 3 | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | Ք. Երևան, Ծովակալ իսակովի 48/1, հեռ. 098190077 |
| 4 | «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ | Սյունիքի մարզ, գ. Անգեղակոթ, հեռ. 094608007 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

3. **Տեղեկություն «ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1» ծածկագրով մրցույթի գնման առարկայի միակ չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գնի վերաբերյալ.**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի /Այսուհետ Կարգ/ 44-րդ կետի առաջին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Չ/հ | Քանակ | Գնման առարկայի միավորի գինը (ՀՀ դրամ) | Գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1. | Օդորակիչ | հատ | 4 | 390000 | 1560000 |
| 2. | Օդորակիչ | հատ | 5 | 235000 | 1175000 |
| 3. | Օդորակիչ | հատ | 1 | 700000 | 700000 |
| 4. | Սառնարան | հատ | 1 | 281000 | 281000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | Սառնարան | հատ | 1 | 179000 | 179000 |
| 6. | Էլեկտրական տաքացուցիչ | հատ | 4 | 25000 | 100000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

4. **Տեղեկություն հայտեր պարունակող ծրարներ կազմման և ներկայացման համապատասխանության մասին.**

**«ՍԵԳ», «Վեգա Ուորլդ», «Փրիթի Ուեյ», «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

5. **Տեղեկություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**«Վեգա Ուորլդ», «Փրիթի Ուեյ», «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ների** կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

6. **Տեղեկություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին անհամապատասխան կազմված լինելու մասին.**

**«ՍԵԳ» ՍՊԸ -ի** կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) չեն համապատասխանում հրավերի պահանջներին՝ համաձայն հրավերի 5.1 կետով սահմանված **2 օրինակ պատճեններ** չներկայացնելու պատճառով:

**Հանձնաժողովը որոշեց.**

1. **«ՍԵԳ» ՍՊԸ -ի** կողմից ներկայացված հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) մերժել և նույնությամբ վերադարձնել ներկայացնողին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

7. **Տեղեկություն մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին.**

Հայտարարվեց հայտ ներկայացրած մասնակցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված հիմք ընդունելով տառերով գրվածը.

(ՀՀ դրամ)

| Հ/հ | Մասնակցների անվանումները | Ինքնարժեք | Շահույթ | Ընդամենը | ԱԱՀ | Առաջարկված Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ | 1015152 | 101515 | 1116667 | 223333 | 1340000 |
| | «Վեգա Ուորլդ» ՍՊԸ | 762632 | 104000 | 866632 | 173368 | 1040000 |
| | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 1052640 | 237360 | 1290000 | 258000 | 1548000 |
| 2. | «Վեգա Ուորլդ» ՍՊԸ | 519079 | 77565 | 596644 | 119357 | 716001 |
| | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 792200 | 178633.3 | 970833 | 194166.667 | 1165000 |
| 3. | «Վեգա Ուորլդ» ՍՊԸ | 228366 | 34124 | 262490 | 52510 | 315000 |
| | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 472600 | 106566.7 | 579167 | 115833.333 | 695000 |
| 4. | «Վեգա Ուորլդ» ՍՊԸ | 195017 | 29141 | 224158 | 44842 | 269000 |
| | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 187000 | 42166.67 | 229167 | 45833.3333 | 275000 |
| 5. | «Վեգա Ուորլդ» ՍՊԸ | 126870 | 18958 | 145828 | 29172 | 175000 |
| | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 118320 | 26680 | 145000 | 29000 | 174000 |
| 6. | «Վեգա Ուորլդ» ՍՊԸ | 55098 | 8232 | 63330 | 12669 | 75999 |
| | «Փրիթի Ուեյ» ՍՊԸ | 63920 | 14413.33 | 78333.3 | 15666.6667 | 94000 |

**Հանձնաժողովը որոշեց.**

2. **«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղը զբաղեցնող են ճանաչվում 1,2,3,4,6 չափաբաժինների մասով՝ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն, 5-րդ չափաբաժնի մասով՝ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն իսկ 2-րդ տեղը զբաղեցնող են ճանաչվում 1-ին չափաբաժնի մասով՝ «Ոստանիկ Հայրենյաց» ՍՊԸ-ն, 2,3,4,6 չափաբաժինների մասով՝ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն, 5-րդ չափաբաժնի մասով՝ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտեր և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:**

3. **Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցններին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

8. **Տեղեկություն Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը[1]:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

9. **Տեղեկություն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.**

«ՀԱ-ՇՀԱՊՁԲ-15/12-16/1» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել Կարգի 49-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա **2016 թվականի նոյեմբերի 29-ին, ժամը 14:00-ին**, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

**Գնահատող հանձնաժողովի նախագահ՝** **Հ. Սաքեյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** **Հ. Կյուրեղյան**

**Պ. Ֆրենգյան**

**Վ. Համբարյան**

**Ա. Մարկոսյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** **Տ. Մարգարյան**

---

[1] Եթե գնման առարկայի նմանատիպ խմբի նախահաշվային գինը գնումների պլանի լրացման կարգի համաձայն չի գերազանցում գնումների բազային միավորի հինգապատիկը, ապա ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի մասով չի գնահատվում: